ԲԱՆԱՒՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

I. ԵՐԳԵՐ.

ՎԻՃԱԿԻ ԵՐԳԵՐ *)

Ա. **)

Ա՜ եար, ա՜ եար, կունել ես,
Մնշակի վունջ բունել ես.
Բարև տուի առար ոչ՝
Ինձնից լաւը գտել ես։

Ալիր մաղեմ թեփ անեմ,
Մեր չուանին կէապ անեմ.
Ես տիւ մի պաղում պիտինք,
Զուայ լիսը քէֆ անենք։

Ախջի քնանք մեր հնձանը,
Գլուխդ դիր ծնկանըս.
Ես դու օտինք պատուինչան
Դուս կայ մեր դուշմանի ջան։

Ա՜յ ալին ալին ախջիկ,
Ծամերը դալին [1]) ախջիկ,
Ես քե որտեղ սիրեցի,
Քու հերանց կալին, ախջիկ։

Ա՜յ աւատայ աւատայ,
Թոխկին ոսկի սաւատ ա.
Ինձ մի սարդար եար ունիմ,
Կասես քաղքի թաւադ ա։

Այ ուխ անենք, ուխ անենք
Ղրմտատին ծուխ անենք.
Ով պետռ մետռ խօսայ
Թագն ու ուսկապը ծուխ անենք։

Արտին կեարին ա հրսել.
Ղարղու ղամիշն ա հրսել.
Նամարդ ըլես, այ իմ՝ եար,
Բոյս բոյիտ ա հրսել։

Արտ եմ արել հրսել ա,
Ղարշու միջին փսել ա,
Խապար արէք էն եարին,
Իմ ու քու վախտը հրսել ա։

Բաղրմս կայ բաղբանչի,
Ջեվ կայ շեվին [1]) նման չի.
Թուփուն թալա [2]) տիւս դառան,
Մինն իմ եարին նման չի։

[1]) Խիտ։

[1]) Բողբոջ։
[2]) Բոլորը։

*) Բացի իմ հաւաքած վիճակի երգերից, ինձ համար հաւաքեցին և պ. պ. Ս. Յակոբեան, Գորգեան, Միրիմանեան, Մ. Ենգիբարեան, Սանասեան, Յ. Թումանեան, դանազան գիւղերից, ընդամէնը մօտ հազար հատ։ Ապա այս բոլորը ես միմեանց հետ համեմատեցի, ընտրելագոյնները վերցրի և լեզուական նրբութիւնները պահպանելու նպատակով երկու խմբի բաժանեցի (Փիփի և Գետաշէնի, իրենց շրջականերով) և խնդրեցի պ. Ն. Մամիկոնեանին, որ որպէս տեղացի, շատ լաւ գիտէ բարբառը, աչքէ անցկացնել։ Շնորհակալութիւնս եմ յայտնում բոլոր վերոյիշեալ պարոններին։

**) Փիփի և նրա շրջակայ գիւղերից։

Գետիս էն ղոլը բաղ ա,
Անգին հուր միջին խաղաչ,
Ինձ մի թաւատ եար ունիմ,
Համ մէլիք ա համ աղա։

Եթիմ ըրախին հէր անենք,
Կաթն ու մածնին մէր անենք,
Լաւ գիւլում ասող աղջիկ,
Մինչի լիսը սէր անենք։

Եկէք քնանք էն ախը,
Ըլբլախաչ կլոխը,
Ով ինձանից քեզ ասի,
Լիք օրորոց վրեչ տեսնի։

Զարգարն ա բոզ չուխաւոր,
Քաթանն ա դէօշին սովոր,
Հալա մին քեամար կուզեմ,
Փոկնեն թուփուզաւոր։

Էն առումը մին կալ պիտէր,
Իմ շհէնին ալ պիտէր,
Ալ շհէնին ինչ անեմ,
Մի ջանդանջգեար եար պիտէր։

Էս օր պաս ա, պաս կենանք,
Ջրհաս ա ջրհաս կենանք,
Ձեռքդ մեկնի ձեռք տանք,
Գեամին նստենք անց կենանք։

Էն տղան էն դռանը,
Թուխ եափնջին կռանը,
Ձոռ տաւ, տունը մտաւ,
Աչքս մնաց կռանը։

Էս օր ուրբաթ ա պաս ա,
Գլխինդ մառ մառ խաս ա,
Ատէր քու կարքին մատաղ
Խի՞ ասրմրս ջհաս ա։

Ըստեղաւ քինա եաշի [1])
Զարդաթդ քցի մաշի,
Իմ մէրս քե հաւան չի,
Խորումտ [2]) թառաչ [3]) քաշի։

Իմ ծաղիկը քաղած ա,
Պացրը սրռում կեաղած ա,
Ով իմ ծաղկին ձեռը տայ
Ըրընթաթախ տափին կէայ։

Լուսնինգան Պանտայ տակին,
Ծունկս ծնկանդ տակին.
Ես քե որտեղ սիրեցի,
Մեխակի ծառի տակին։

Կանգնել ես կանչում էլ չես,
Բոյիցդ ամանչում էլ չես,
Եկայ կըշտովդ անց կացայ,
Տէր ես ճանաչում էլ չես։

Կանաչ-կարմիր շափաղ է
Ես մի նուռան ղափաղ է.
Ձեօլրվոր քնող ախպեր,
Ջանս ջանիդ մատաղ է։

Կանանչ տափ ա, կարմիր լոր,
Բախճէն բիւթիւն ալ խնձոր.
Բաղը ես եմ, բարը տիւ,
Իմ սիրելի եարը տիւ։

Կանաչ կարմիր սիւրվացու,
Կարմիր եզը մսացու,
Դու իմ նանին հրընացու
Ես քու նանին փեսացու։

Կաքաւը կանգնել ա քարին,
Կտուցը կարմիր արին,
Դաղստան եսիր պիտի
Իմ սիրած եարին առնի։

Կէտ ա քընիւմ իրես, իրես.
Խոջայ Ատուած կսիրես,
Ինձ մի հեռու եար ունիմ,
Խէր խաբարը տիւ պիրես։

[1]) Նայիր։

[2]) Խոր։ [3]) Հառաչանք։

Կիւթանի էրգան ծէրը
Փիս կինի սըրվըտէրը.
Սըրվըտէրը հունց անի,
Ըռնըտէրը հէրն ու մէրը։

Կիւթանը վարի հողը,
Ղաւալը կածի փողը,
Հով ընձանայ քե ասի,
Վէչ ընգնի օխնած հողը։

Հունձ եմ արել նեղացել,
Գետն եմ մտել լեղացել,
Ութ օրուայ հիւանդ ի,
Ծոցդ եմ մտել սաղացել։

Ձեթ եմ առել լսացու,
Կանաչ խարար քիսացու.
Դու իմ նանին հըրսնացու,
Ես քու նանին փրսացու։

Ձեռնիս ա մածնի քսակ,
Էտնիցս եկաք հրսաք,
Էն օրին մատաղ ըլնեմ,
Ես դու գնանք տէ պսակ։

Ձորերս ընի ղանդ երա,
Քիմ ըրծաթի բանդեր ա,
Եար ջան, քու ջանին մատաղ,
Սիրածդ տանը անտէր ա։

Ղալամ քաշեմ էն քարին,
Նստած տեղս ա սարին [1]),
Բզարից բերեմ եաղլուխ,
Ղարկեմ իմ սիրած եարին։

Ղումարի հաղ ես արել,
Նախիրը բաղն ես արել,
Պիլօր իրեք տարի ա
Ինձ մի խօսքի դութսաղ ես արել։

[1]) Հով։

Մածուն եմ մերել սրալի,
Եար եմ փռնել սրտալի,
Հով որ եարը եարէն հանի,
Հոքին սրտանէն տանի։

Մատուցս կայ մըտանի,
Համ թառ ա համ ծիրանի,
Արի քինանք դիւանը,
Հով սիրել ա, նա տանի։

Մեր բաղումը կայ արօտ,
Ջամամները խնկահոտ,
Եարիս համար եմ պահէ
Նա է իմ ծոցիս կարօտ։

Մեր վճխարին եաթաղը,
Գլխիս դնեմ փափախը.
Ջանդուրուկդ [1]) ետ քցես
Ըրեսիս տայ շափաղը։

Մեր տան տակին վար կանեմ,
Ջար ակռաւին քար կանեմ,
Որ իմ սիրածս ինձ տան,
Պլութենս թարգ կանեմ։

Մեր տուն ձեր տուն մին պտէր,
Միջի պատը չի պիտէր,
Միջի պատը ոնց անի,
Քաւթառ տատը չի պիտէր։

Մեր տուն ձեր տանէն դիմաց,
Աչքով կանեմ, ունքով իմաց,
Ես քե թաքուն էի սիրել,
Ով արաւ խալխին իմաց.

Մթնելա մթնճանաչ,
Դրանդա քոլն կանաչ,
Հրէս եկաւ իմ եարը,
Ալ հեսկի ծուփը կանաչ։

[1]) Քողդ։

Մտիկ ըրէք էն ղուշին,
Վէտը տրէլ ա փուշին,
Ելրանի ընդիւր կի՛ լի
Թուշը տրել ա սրածին։

Նախշը կանեմ, թել չափեմ,
Ես բոշայ չեմ, քե խափեմ.
Դաղըստան եսիր կ'տայ,
Ղուլլա կ'տամ, քե թափեմ։

Նռան ծառին նուռ չկայ,
Վարդի ծառին վարդ չկայ,
Էս վենց քանդուած օլքայ ա
Սիրածը սիրածին չեն տայ։

Նստած կտուրս թախտ ա,
Ձիուս կիլօխը ըռախտ ա,
Մի թազա եար եմ բռնել,
Պոչերը [1]) առհանի վարդ ա։

Նստել ես հատիկ պատիկ,
Օնքերդ նռան հատիկ.
Ես տիւ մին պախչում պտենք,
Ես վրդևոր տիւ զատիկ։

Նստել ես բարձր հովին,
Փռփռում է դոշի մովին,
Դու բարակ, մէջքդ բարակ,
Ղուլ գնամ ջէյրան ջանիդ։

Ոչխարս արել եմ դիւզը,
Ջոկել եմ ղարագեօզը,
Եաղլախդ ղարկի նխշեմ,
Վարդով լցնեմ քե բախշեմ։

Ոչխարը դիւզի վրայ,
Ղըղխը խուզի վրայ,
Ես մի թուխի ղուշ պիտի,
Իմ եարի ուսի վրայ։

[1]) Վարս։

Ձոլիցը պիրեմ ծիրանը,
Քոլիցը պիրեմ գերանը,
Լաւ գիւլում ասող աղջիկ,
Անուշ կենայ բերանդ։

Պստիկ աղջիկ գալում ես,
Մազերդ սղալում ես,
Ինձ առնելու միտք ունիս,
Խունջիկ մունջիկ գալում ես։

Ջուրս կէծ ա, ջուր պիրէք,
Սպըհանայ հիւն պիրէք,
Տուն հաւասար թամամ են,
Ղարիբ ղուշը տուն պիրէք։

Ջուրն իլաւ երես երես,
Բազիրգան Աստուած սիրես,
Երբ որ գնաս Ջորագեալ,
Ղարիպ եարս հետդ պիրես։

Ջուրը ջրին առել ա,
Մատս ղալամ դառել ա,
Էն թուխ բեղաւոր տղէն
Ուշն ու միտքս տարել ա։

Ջբումս եմ դրել կաշի,
Աչքս ճամփայ կը եաշի.
Ձքանց իմ եարի կեալը,
Հալալ կէսս կը մաշի։

Սազին կոթին կիր կանեմ,
Վենը կաց գինի բերեմ,
Ես էս պիծի տեղաւս,
Ցրուած խելքդ տոն պիրեմ։

Սիրել եմ սարի տակին,
Սաղմոսը կռնատակին,
Որ սիրել եմ կը տանեմ,
Ծառայ եմ նահատակին։

Սրերի խինձը ինչ անի,
Կաթնով բրինձը ինչ անի,

Իւրիւր սիրել ենք կառնենք,
Ուրշի խօսք ու զրիցն ինչ անի։

Տանս տակին խնկի ծառ,
Ոսկի կաքաւ վրէն թառ,
Քներ կեր թեւին տէր
Ալան ծաղիկ տանել տէր։

Տանձի ծառին ղուշ կըլի,
Նռան ծառին փուշ կըլի,
Հնիրակ կըտամ էն եարին,
Սիրած եարին թուշ կըլի։

Տանս տակին կար գերան,
Հարս ու աղջիկ նի դառան,
Կուռս տարայ թէ բռնեմ,
Լոխ իմ մեր ու քեր դառան։

Տիւ կաղնել ես կիւթանիտ,
Ձիրմըշրղը պերանիտ,
Տիւ պարակ, մէջքդ պարակ,
Ղօլ քընամ ջէյրան ջանիտ։

Տուն եմ շինել զընանայ,
Ղարշու պիրէք տիմանայ,
Մի պուտ ջուր տուէք խմեմ,
Բալքամ սիրտս հովանայ։

Տուն եմ սրբել նամ ա,
Սիւները արծաթի ջամ ա,
Ա նան շատ մի խրսլ տալ,
Նոր ա եկել եարս խամ ա։

Տրինինանց կտերը,
Ծլվլում են ծտերը,
Ես գնում եմ լաց չինես,
Քնած տեղդ բաց չինես։

Քամին կանի պեքին կտանի,
Սև ոչխարը թոքին կանի,
Ով սիրածը սիրածից հանի,
Ձար սատանէն հոգին հանի։

Քընա գիր էրա էն քարին,
Ալթաւան դիր մեր եարին,
Որ տեղէն եան չի տան,
Ես եմ Մռաւայ սարին։

Քինալիս հրղէն քոլ ա,
Ձեռքինս ցուրտ ցուրտ կոլ ա.
Թոռը քինաս կանուխ եկ,
Ես վրետան տակին կորայ։

Քնա, քնա երևայ,
Կակոխ պռշնիքդ երևայ,
Սև քթակրդ դպետ [1]) դիր,
Սիպտակ ճակատդ ըրևայ։

Քնա՜, քնալիտ մատաղ,
Մէճկիտ քմակին մատաղ,
Տանէն նգարան չունես,
Աննգարան ջանիտ մատաղ։

Քնացի ջուրը ջրի,
Վէտրս ընգաւ օցի լըղի.
Իմ հօրն ու մօր աճկը տիւս կեար,
Վէր ինձ տրվին ղարիբ տըղի։

Քնացի տեսայ քնած ա,
Գիւլդիւր գիւլդիւր քրթնած ա,
Ետ քցեցի թա տեսնեմ,
Վարդ մեխակ խռնուած ա։

Քափազայ սարը սար ա,
Տակը զնջիլած քար ա.
Ես քեզ թաքուն սիրեցի,
Էն ով ըրաւ աշկարայ։

Քինա ասի իմ նանին,
Ալթաւան դնի թաւին.
Ուրիշ տեղ աղջիկ չտայ՝
Կանուխ կը քինայ շիվանին։

---

[1]) Դէպի ետ։

Քինալիս հըղէս քոլ ա,
Ձեռ-քինս ցուրտ ցուրտ կոլ ա
Թորը քինաս կանուխ եկ
Ես վետան տսկին կորայ։

Բ. *)

Ախջի անունդ Վարթի,
Ձէն տամ ձէնս ճնաչի,
Ով ինձանայ քեզ ասի,
Դու ընդրա աչքը հանի։

Ախջի անումդ Զանի,
Աչքեր ունիս ջէյրանի,
Մին մատներդ դէս պահի,
Քաշեմ ոսկի մտանի։

Ախճի անունդ Փարիշան,
Երեսդ խալ շառնշան.
Խօսք տուր որ դու ինձ կը գաս
Մատնիս տամ քե նշան։

Ախճի Գիւլի բաղդաւոր,
Եարդ հէնց ա թագաւոր.
Բարով մուրազի հասնէք,
Ձեր վրթիորը շնհաւոր։

Ախճի, եկ քնանք բաղը,
Պուկենք շմամի թաղը.
Քու ըրեսիտ շափաղը՝
Հանել ա սրտիս դաղը։

Ա տղայ, անումըտ Առուշան,
Սիպտակ կուլիտ [1]) թուխ նըշան.
Եաղուխսըտ ըղարկի անեմ,
Պահեմ քու եարիտ նըշան։

Այ հէւա, հէւա թեւքըս,
Ծըրանի մով ա թեւքըս,
Պաց տօպը կարմիր հաւէշ,
Հիւնչ կանեմ, սեւ ա սէրտըս։

Ե՜յ ափը կէաս, ափը կէաս,
Մեծ ղզանին քէափը կէաս.
Որ դու ըտէնց խօսացիր,
Բոյաւդ մէկ տափը կէաս։

Այ ախ կանեմ, ախ կանեմ,
Քոշը վոտաս լախ կանեմ.
Ա՛ տղայ հերիք ա խօսաս,
Մուկն ըռեխատ քաշ կանեմ։

Արար վարար շըտարար [1]),
Սարուն թոռ կիգայ վարար.
Ըտեղաւ թոռն ես քինում,
Ետ դառ, եկ, ուշս տարար։

Ա տղայ կաղնել ես ետ հողին,
Քիբդ լիքը տկողին,
Մինը ուզեցի տվիր ոչ,
Հարամ ըլլի ուտողին։

Ա տղայ դու կանգնել ես նովին,
Փուփուայ դէօշիդ կարմիր մովին,
Ոչ քեզ է հաւան ոչ քո տեսնողին,
Աշուղ մշտարի քո շիմշատ բոյին։

Ա՛յ տղայ, սիրուն փեսայ,
Քեզ հազար բարով տեսայ.
Ձէն կենայ էս վրթիորը՝
Սրտիս մուրազին հասայ։

Այ տղայ եր անիլ տուր,
Մրուքդ վեր անիլ տուր,
Հերս քե աղջիկ չի տալ,
Տէրտէրին գիր անիլ տուր։

---

[1]) Բուխախ։

[1]) Ցորենը յարդից ջոկող մաղ։

---

*) Գետաշէն և նրա շրջակայ գիւղերից։

Արկանքը աղին երայ,
Ջամամը թաղին երայ.
Ես մի թիթռա [1]) դուշ պիտի
Իմ եարին բաղին երայ։

Քոյս բոյիդ նման ա,
Քու բոյը նըրդըվան ա.
Ալամ աշխարհ մի ղութի,
Էն ղութին քե դուրրան ա։

Գեանճու նստած խաները,
Մեր մոթալին պանիրը,
Ային օլին խոսալ մի,
Քու հարն է իմ հանէրը։

Գեանճու ըղին փոշ անենք,
Քո վոններին քոշ անենք,
Քանի վախտ ա տեսիլ չեմ,
Ե՛ մին [2]) եախշի խոշ անենք։

Գեանճու տակին շաղ կտամ,
Թերմա շալը թառ կտամ,
Հով իմ սիրածն ինձ տայ,
Իմ ջանը ղուրբան կըտամ։

Գետիս էն ղոլը շուշայ,
Իմ եարս բէկլար դուշ ա.
Էն հով ա ասում գէշ ա,
Քանց շաքարն էլ անուշ ա։

Գետիս էս ղոլը ցել ա,
Ցելը ջրով լցուել ա,
Խաբար արէք էն եարին,
Սիրածդ դարդով լցուել ա։

Գետ ա կեալիս ճուիրես [3])
Խօջա, Ստուճ կը սիրես
Հեռու տեղ մին եար ունիմ,
Խեր խապարը դու պիրես։

[1]) Թեթև։
[2]) Եկ մի։ [3]) Ձուի երես, շողշողուն։

Գիւլպայ կանեմ տանի տղին,
Ման կը գեամ կեղած տղին,
Կէօխս բաղայ կը տամ,
Էն եարին ղարիբ տղին։

Գիւլպայ կանեմ տափ կանանչ,
Ման կը գամ համանչ մամանչ,
Ով ուզի ոչ եարս գայ,
Ոչ կապի կարմիր, կանաչ։

Գիւլիւմ կասեմ, կ'շարեմ,
Զվալ կածեմ, կ'շարեմ.
Կորի, քնա, շան տղայ,
Քեզանից լաւը կ'ճարեմ։

Գլխանոտ երի [1]) սարն եմ,
Ունքերս ուրուր կը խառնեմ,
Կուսս ճտովդ բերեմ,
Ոոցիդ մեխակն առնեմ։

Գնացել ես, եկել ես,
Մտշիկներդ մաշել ես,
Մաշիկներիդ, քեզ մատաղ.
Գառը մորից ջոկել ես։

Գնացի սարը սոնգը [2]),
Փոշը ըլաւ աջի ծոնգը [3]).
Ես դու մէկ բաղում պիտենք
Ես բուրվառ, դու խոնգը։

Գնացի տեսայ քնած,
Գիւլդիւր-գիւլդիւր քրտնած,
Մէկ երեսը ետ գցի,
Տեսնեմ վարդ մանիշակը փռած։

Գութանին էրկէն ծէրը
Փիս կինի սրրվրտէրը.
Սրրվրտէրը հոնց անի,
Քռանայ հէրն ու մէրը։

[1]) Վերևի։ [2]) Սունգ։ [3]) Ծունգ։

Դարդս հալեմ հլցնեմ,
Ճրագ ածեմ կպցնեմ,
Իմ նանը ճանդրս քցեմ
Իմ դարտ ասեմ, լըցընեմ։

Դու նստել ես սրսնագին [1]),
Ջուղաբ արա փռանգին,
Թազա փեսան ինչ կուտի,
Ղքարով ճիշտռանգին։

Եկէք քինանք էն օխը,
Գիւլբիւղաղը կիլոխը,
Բարի եարից հանողը
Հանենք կարճկին [2]) կիլոխը։

Ես աղջիկ եմ նոր մազայ,
Աշխարքն ինձ փիանդազայ,
Սնմահական խնձորը
Կանեմ եարիս թաւազայ։

Ես մի թրւաւոր ղուշ եմ.
Դեղին թրվաւոր ղուշ եմ.
Ինձ մի բրախ տուէք թռչեմ,
Իմ եարին սովոր ղուշ եմ։

Ես մին շամամի թաղ եմ,
Ո՛չ մեռած եմ, ոչ սաղ եմ.
Պիլոր օխտը տարի ա,
Ես մին խոսքի կարօտ եմ։

Ես մի ղուշ եմ էս հալիս,
Մեծ տանը ձէնս տալիս.
Մի ցուրտ ցուրտ ախպէր պտէր՝
Էն եարը վրէն կեալիս։

Ես մի փշուշիկ տեսխ եմ,
Ղուշուայ ղալէն կը կոխեմ,
Ամէն եարի հաւան չեմ,
Եար կը տամ, եար փոխեմ։

Ես էն եարին եար պտի,
Կեօտկումը խիար պտի.
Ղոքաձ, քրրտնաձ տեղը
Կլխի քեօշին սար պտի։

Ես գնացի մեր ժամը,
Տեսայ վարաղաձ շամը.
Խելքս գնաց, որ տեսայ,
Գլխիդ տասներկու ծամը։

Ես տիւ նստենք բէյաս անենք,
Գլխիտ մառ մառ խաս անենք.
Սիննաթ անենք մեր տէրին,
Հասը հաս անենք։

Երէկնակին տէր աղբէր,
Ոյ շղթաթաղ աղբէր,
Ղաքար մաղեմ կէր աղբէր,
Ջանս մատաղ քեզ աղբէր։

Էյվանումս կար կանեմ,
Մեր ղշերին քար կանեմ.
Հսկանամ թա եարս ա կիւմ,
Կարս ձեռքիցս թիւլ կանեմ։

Էն ծառին հինչ կ'սազայ,
Ճղներին կինձ կ'սազայ.
Լիլն լել ա պրծել,
Ասիլն էլ հինչ կ'սազայ։

Էն սարին արտը մերն ա,
Ցոնքերդ կեռու մեռն ա.
Փափաղդ բարձր պահի,
Սիպտակ ճակատդ երևնայ։

Ըստեղան ալ աղջիկ,
Աչքերը չալ չալ աղջիկ,
Եա իմ քէնին քուր պիտէր,
Եա իմ քէր քե տալ աղջիկ։

Ըրեգնակը սարի վրայ,
Մամուռը քարի վրայ.

[1]) Կտուր։ [2]) Երկու փայտից նաժ։

Ես մի արծաթի սարք պիտէի
Իմ սիրած եարի վրայ։

Թըխպել ա թոռ չի գալիս,
Մթնել ա տոն չի գալիս.
Տեղ էմ քցել նի՛ մտել,
Ցաչքերիս քուն չի կեալիս։

Թոռը գալիս է շղալով,
Կանաչ տերև դողալով.
Հրէս եկաւ իմ Եարը
Բոզ ձին տակին խաղալով։

Իմ ախպէրը էն անցումը,
Կիւթանի եղնանցումը.
Կիր եմ կիրել ըղարկել
Վադաս ա հմբարցումը։

Իմ ծաղիկը քաղած ա,
Պեօցր սարում կեաղած ա.
Որ լուսնկայ դուրս կը գայ,
Իմ ծաղիկը լուս կը տայ։

Լուսինը Պանտի տակին,
Մամուռը քարի տակին.
Ես իմ եարին կարօտ եմ,
Քանց վարդ մանուշակին։

Լուսննկայ էրկան գիշեր,
Կեռ. ունքեր կարմիր թշեր.
Ես քինում եմ մեր տունը
Քեզ խէր ու բարի գիշեր [1]։

Ծալք եմ սարքել հաւան չեմ,
Ես իմ գլխի դիվան չեմ.
Ղինար ղինար կըտորես,
Ես էն տղին հաւան չեմ։

Կաթնրս թքցնեմ վեր դնեմ,
Ինձ մին գեռլար [1] եար ունեմ.

[1] Երգում են բաժանուելիս։
[1] Գեռ—հպարտ։

Ճատ ու խրիկ խօսալ մի,
Ամէն մաղիս տէր ունեմ։

Կաքաւը կանգնեց քարին,
Կտոցն ա կարմիր արին,
Տիւրուր մի տար լաց կինիմ,
Սիրտս ա գէօլ գէօլ արին։

Կետի էն ղոլը հուռը,
Քաղել եմ մի դեաստա նուռը.
Հով իմ սիրածը ինձ չտայ՝
Կը քաշեմ խանի տիւռը։

Կիւթանիս լիւծը պիտի,
Դուշմանիս օձը պիտի.
Այվան, օթախ, պոչիկ [1]) եար՝
Կոշտնըվեր ոտնը պիտի։

Կտրաւս քօչ ա քընիւմ,
Քօչ-քօչի մէջ ա քընիւմ.
Երանի էն քվօրը,
Օխտն ախպօր մէջ ա քընում։

Հարած կիւտած խոտ ունիմ,
Քու միջումը փութ [2]) ունիմ,
Տիւն մին փունջ մընեշակ պիտեր,
Քթիս դնեմ հոտ ունեմ։

Հաղ կասիմ, հաղի կլխին,
Ծրոնըվերայ բաղի կլխին.
Ես էն հաղը վաղ եմ ասել,
Քշեր ցիրեկ տաղ եմ ասել։

Հստայ, հստայ հալ չունիմ,
Էրուած սրտիս ճար չունիմ,
Բողճայ ունիմ բաղդ չունիմ
Ես իմ եարը տեսած չունիմ։

Հաւը թառն ըլաւ
Իմ պան խալխով ընկաւ,

[1] Վատ վարդ։ [2]) Պակասութիւն։

Սաբաբ, քու բալէն մեռնի,
Խի իմ սանը կռուաւ ըլաւ։

Հոռի ծառին բար [1]) չիլիլ,
Տակը քար ա, վար չիլիլ.
Ին Աստուծն ու երկինքը,
Սրրվրտորին [2]) ճար չիլիլ։

Հուռի ծառին հոռ [3]) մնաց,
Աստուծանուն թոռ մնաց,
Ըռաջաւս ընցկացար,
Վիզս ետկիցդ ծոռ մնաց։

Ձկնու ծովը սառել ա,
Ձուկնը տակը կալել ա,
Թուխս փափախ, սիպտակ ճակատ,
Եարի խելքը տարել ա։

Մեր բաղումը բաղումը,
Մանուշակի թաղումը,
Կարմիր վարդը հինչ անի,
Թուշերիդ եարփաղումը։

Մին եար օնիմ տանն ի,
Մատդ քցեմ մտանի,
Սիրաց սրածան հանողը
Հոգին ստանան տանի։

Մին նռան օնիմ քսքարանք,
Ձորս ղոլն ա փսպարանք,
Փսպարանքս տեղ հասնի,
Սիրած եարս ինձ հասնի։

Նռան ծառին փուշ կըլի,
Վարդի ծառին ղուշ կըլի,
Հըրանի էն ախճրկանը՝
Սիրած եարին թուշ կըլի։

Նուռը նռանը վրայ,
Ծիտը ճղնանը վրայ,
Ես մի թուխի ղուշ պտի,
Իմ եարի կըռանը վըրայ։

Նստել ես ջոխտ գերանին,
Ձրմրուղը [1]) բերանին,
Դու պարակ մէջքդ պարակ,
Ղուլ քինամ ջէյրան ձէնիդ։

Ձէնը շէնա շէն շենայ,
Եղձին տեսայ դէն կենայ,
Որ սիրեր եմ կը տանեմ,
Պանցը Պանտը դէմ կենայ։

Ձփարովը շուռ կը տամ,
Ոսկէ ղուլս [2]) թառ [3]) կը տամ.
Ես էս պիծի տեղովս՝
Խելքով քեզ խրատ կը տամ։

Ձատըր եմ ճարել սրրերին,
Ըսպաթ [4]) եմ գրել քարերին.
Ձիւնքի մանգղիլդ [5]) էդքան ա,
Խէ ըրեր մեղքը եարին։

Ձրդախիտ թան եմ ածել,
Բոչիտ նման եմ ածել.
Խափել եմ, թա քեզ կ'կամ,
Բլարղու ման եմ ածել։

Պաց ըրի բաղի տիւռը,
Ուզեցի խոնչայ նուռը,
Խոնչայ նուռը հինչ անեմ,
Ուզեցի եարիս տիւռը։

Պլօտնիկը փետ տաշի,
Քիւչա-քիւչա կը եաշի,
Կոժը օսեմ ջուրը գնամ,
Կը եաշեմ, թառանչ քաշեմ։

---

1) Պտուղ։ 2) Սիրահարուածին։
3) Ոլորուած։

1) Ճիպոտ։ 2) Կողքս։ 3) Կախ։
4) Վկայ։ 5) Ասպարէզ։

Սարան վեր կը գանք հարթը,
Կը քաղենք դաստա վարդը.
Ես քղեցի դու տարար,
Մշալա՜ միջի մարդը։

Սարան վեր եկայ սառնը,
Ունքերս էր իւրուր խառնը,
Կոռս վզովդ բիրեմ,
Ծոցիդ մեխակը առնեմ։

Սոպտակ ու սև մի մանած,
Իմ եարը սրհմանած,
Օխտը տարի տեսել չեմ,
Հէնց եմ ըշխարէն հանած։

Սարերի խոտը ցեղվըցեղ [1]),
Ախպէր եկ քնանք մին տեղ,
Հով քու ջանին դաստ կտայ՝
Իմը կըտամ քունին տեղ։

Սարերի խոտը հոտել ա,
Եզնինքը նըստոտել ա.
Հրէս եկաւ իմ եարը,
Քանքիւլը թզոտել ա։

Սիրել եմ սիրի չախին,
Ասու էն հալալ հախին.
Սիրել եմ, պաց չեմ թողել,
Ձվայ իր մեռնիլի չախին։

Սիրել եմ տաք աշունքին,
Հաւան եմ աչկը ունքին.
Ջրին ընկաւ թա խմի,
Քեանքիւլն ընկաւ թկիւնքին։

Սռանը աշմիշ ըլար,
Նհետս դոշմիշ ըլար.
Ես քի պան չի ըսեցի,
Խի՞ կանուխ չաշմիշ [2]) ըլար։

[1]) Ձեղջ շեղջ։ [2]) Ձշկլուել։

Վարդի տակին կար կանեմ,
Վարդը պոչից [1]) կախ կանեմ,
Ես էս պիծի տեղովս,
Քեզ հալումաշ կանեմ։

Տանըս տակը շլորի,
Ճղները ետ կ'հլորի.
Հրռնակ էն քըվորը,
Օխտ ախպօր թաք կ'հլորի։

Տանըս տակին դալ կ'տամ,
Մէճկաւս քաթան կ'տամ.
Հով իմ եարը ինձ կ'տայ,
Հորթը տակին կով կ'տամ։

Տանս տակին հունձ կանեմ,
Մանգաղս կոտրեմ, հունձ կանեմ,
Ոչ թան կը տան, ոչ մածուն,
Սիրտս կերաւ, ոնց կանեմ։

Տեղին հաւը ձուն փորին,
Իմ աճկը Նուխվայ հղերին.
Նուխվայ հողերը մի փուլ կայ,
Բալքայ իմ եարը տուն կայ։

Տուն եմ շինել դրռ նամ ա,
Կոճերը էրծաթի ջամ ա.
Անա խրրիկ խուրխոթանք [2]) տու,
Նոր ա էկել դրռ խամ ա։

Փոտի-փոտի տուն ունեմ,
Միչին վէսկի սիւն ունեմ.
Սիւնը կերան քար պտէր,
Իմ ուզած եարը պտէր։

Քինացի բաղիս տոռնը,
Տիւս պերան շրհանոռնը,
Շրհանոռնը հինչ անեմ,
Օղում եմ եարիս կոռնը։

(Կը շարունակուի)

[1]) Վարս. [2]) Յանդիմանութիւն։